ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնք
Հասցե՝ գ. Ամասիա 26Փողոց« 19շենք
հեռախոս /0246/ -223-10
էլ. Փոստ amasia.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբերի 2016 թվականի թիվ 3-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-ի հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի դրույթով՝ Ամասիայի համայնքի ավագանին.

որոշում է

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածությունը ներկայացնելու և համաձայնեցնելու կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ (11)	դեմ (0)	ձեռնպահ(0)
1.Արտեմ Դավթյան			
2.Մանվել Խոջումյան			
3.Արա Հարությունյան			
4.Տիգրան Հարությունյան			
5.Սերոբ Ղուկասյան			

6.Կարապետ Մելքոնյան _____ _____ _____

7.Արման Միրզոյան _____ _____ _____

8.Հայկ Նիկոլյան _____ _____ _____

9.Վարդան Պապիկյան _____ _____ _____

10.Անդրանիկ Վարդանյան _____ _____ _____

11.Ալեքսան Քոչոյան _____ _____ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«19» հոկտեմբերի 2016 թվական

գյուղ Ամասիա

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Ամասիայի համայնքի ավագանու 2016 թվականի

հոկտեմբերի 19-ի թիվ 3-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա բազմաբնակավայր համայնքի (այսուհետ՝ Համայնք) կազմում ընդգրկված, համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածուին առաջադրելու, նրա թեկնածությունը տվյալ բնակավայրի բնակիչներին ներկայացնելու և նրանց հետ համաձայնեցնելու ինչպես նաև այդ գործընթացի արդյունքների վերաբերյալ համայնքի ավագանուն տեղեկատվություն տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները:

II. ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ, ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածուին սեփական հայեցողությամբ առաջադրում է համայնքի ղեկավարը՝ առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

3. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածությունը այդ բնակավայրի բնակիչներին ներկայացնելու և նրանց հետ համաձայնեցնելու համար տվյալ բնակավայրում իրականացվում են մեկ կամ ավելի հանրային քննարկումներ:

4. Հանրային քննարկումները իրականացվում և ամփոփվում են համայնքի ավագանու կողմից հաստատված «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգով» սահմանված՝ հանրային քննարկումների իրականացման ընթացակարգով:

5. Վերոնշյալ նպատակով կազմակերպվող հանրային քննարկումներին կարող են մասնակցել տվյալ բնակավայրի շահագրգիռ բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք:

6. Հիմնվելով համայնքի կազմում ընդգրկված բնակավայրում իրականացված հանրայի քննարկումների արդյունքների վրա՝ համայնքի ղեկավարը կարող է՝

1) նշանակել վարչական ներկայացուցիչ իր կողմից առաջադրված թեկնածուին.

2) առաջադրել տվյալ բնակավայրի վարչական ներկայացուցչի նոր թեկնածու:

7. Սույն կարգի 6-րդ կետի «բ» ենթակետով սահմանված դեպքում տվյալ բնակավայրի վարչակա ներկայացուցչի թեկնածությունը բնակավայրի բնակիչներին ներկայացնելու և նրանց հե համաձայնեցնելու համար համայնքի ղեկավարը այդ բնակավայրում կրկին իրականացնում է մեկ կա ավելի հանրային քննարկումներ:

8. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածությունն ներկայացնելու և համաձայնեցնելու նպատակով հանրային քննարկումների իրականացում ֆինանսավորվում է համայնքի բյուջեից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**